




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ




STATUTS

DE LA

SOCIÉTÉ DE LA CROIX-ROUGE


DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE



1926

Impr. MASSIS, 208 bis Rue Lafayette

PARIS (10^e).




614.885

3-

. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ



STATUTS


DE LA

SOCIÉTÉ DE LA CROIX-ROUGE

DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՓԱՐԻՋԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ




1926

Impr. MASSIS, 208 bis Rue Lafayette
PARIS (10^e).

Handwritten notes in the left margin: A 255 and some illegible characters.

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ



Յօդ. 1.— Հայաստանի Կարմիր-Խաչի Ընկերութիւնը կազմակերպուած է համաձայն Միջազգային Կարմիր-Խաչի սկզբունքներուն, որոնք ընդունուած են 1863էն 1907 հաստատուած միջազգային պայմանագրութիւններով և ուրիշ միջազգային կանոնագրութիւններով:

Յօդ. 2.— Ընկերութիւնը կը գտնուի Հայաստանի կառավարութեան հովանաւորութեան ներքեւ և կը վայելէ անոր տուած արտօնութիւնները:

Յօդ. 3.— Հայաստանի Կարմիր-Խաչի Ընկերութեան նպատակն է.

ա) Խնամել Հանրապետութեան հիւանդ և վիրաւոր զինուորները, ինչպէս նաեւ այն հիւանդներն ու զինուորները որոնք Ընկերութեան գործունէութեան շրջանին մէջ կրնան գտնուիլ:

բ) Ամէն տեսակ օգնութիւն ցոյց տալ հաշմանդամներուն, եւ ընդհանուր աղէտներու, համաճարակներու, ու մասնաւորապէս մալարիայի դոհներուն:

Ընկերութիւնը կարող է վերոյիշեալ նպատակներով իր օգնութեան գործը տարածել նաեւ երկրէն դուրս:

Յօդ. 4.— Առաջադրեալ նպատակներուն հասնելու համար Հայաստանի Կարմիր-Խաչի Ընկերութիւնը նախաձեռնութիւն կ'առնէ իշխանութեանց մօտ՝ հարկ եղած իրաւունքները ձեռք բերելու համար, կը կազմակերպէ ամէն տեսակ օժանդակ հիմնարկութիւններ, զանազան ձեռնարկութիւններ, ևլն.:

օդ. 5.— Ընկերութեան կարող են անդամագրուիլ բոլոր չափահաս քաղաքացիները՝ առանց ազգութեան, դաւանանքի կամ սեռի խտրութեան, ինչպէս և պետական և հասարակական հիմնարկութիւններն ու կազմակերպութիւնները:

Յօդ. 6.— Անդամները կը վճարեն տարեկան 50 կոպեկ՝ ոսկեգրամ տարուան սկիզբը, իսկ հիմնարկութիւններն ու կազմակերպութիւնները՝ 10 ուրլի:

Յօդ. 7.— Ընկերութեան զործող մարմիններն են.

- ա) Ընդհանուր ժողովը,
- բ) Գլխաւոր վարչութիւնը,
- գ) Վերստուգիչ յանձնաժողովը:

Յօդ. 8.— Ընդհանուր ժողովները հերթական ու արտակարգ են և կը զուգարուին Հայաստանի մայրաքաղաքը: Հերթական ընդհանուր ժողովը նիստի կը հրաւիրուի տարեկան գոնէ մէկ անգամ, ոչ աւելի ուշ քան Ապրիլի մէկը, իսկ արտակարգ ընդհանուր ժողովը կը կայանայ ամէն անգամ երբ՝ ա) գլխաւոր վարչութիւնը այդպէս կ'որոշէ, բ) երբ վերստուգիչ Յանձնաժողովը կը պահանջէ, և գ) երբ Ընկերութեան անդամներուն մէկ քառորդէն աւելին առ այդ զրաւոր պահանջ կը ներկայացնեն:

Յօդ. 9.— Ժողովը օրինական կը համարուի, երբ անդամներուն առ նուազն մէկ երրորդը ներկայ ըլլան: Երկրորդ անգամ հրաւիրուած ընդհանուր ժողովը օրինական կը համարուի՝ անկախ ներկայ եղողներու թուէն:

Յօդ. 10.— Ընդհանուր ժողովին իրաւասութեան կ'ենթարկուին հետեւեալ խնդիրները.

- ա) Գլխաւոր վարչութեան և անոր ենթակայ հիմնարկութեանց զործունէութեան համար կանոններ հաստատել,
- բ) Քննել Գլխաւոր վարչութեան ընդհա-

նուր հաշուետուութիւնը Ընկերութեան գործունէութեան և միջոցներուն մասին, Գ) լուծել ընդհանուր քնոյթ կրող կարեւոր խնդիրները, Վ) ընտրել Գլխաւոր Վարչութիւն և Վերստուգիչ Յանձնաժողով, Ե) հաստատել Ընկերութեան պիւտճէի նախագիծը:

Յօդ. 11.— Ընդհանուր ժողովին օրակարգը կազմուած է Գլխաւոր Վարչութեան կողմէ և կը յայտարարուի մէկ ամիս առաջ:

Եթէ Ընկերութեան անդամները ուզեն առաջարկ մտցնել Ընդհանուր ժողովին քննութեան համար, պարտաւոր են այդ առաջարկը ներկայացնել Գլխաւոր Վարչութեան՝ ընդհանուր ժողովին գումարման թուականէն առ նուազն երկու շաբաթ առաջ:

Յօդ. 12.— Ընդհանուր ժողովին մէջ քննուած խընդիրները կը վճռուին ձայներու պարզ մեծամասնութեամբ, իսկ ընտրութիւնները կը կատարուին բաց քուէարկութեամբ, ձայներու համեմատական մեծամասնութեամբ:

Յօդ. 13.— Ընդհանուր ժողովը կը վարէ իր նախագահը, իսկ արձանագրութիւնը կը կազմէ քարտուղարութիւնը: Նախագահն ու քարտուղարը կը վաւերացնեն նիստերուն ատենագրութիւններն ու որոշումները և կը յանձնեն Գլխաւոր Վարչութեան:

Յօդ. 14.— Ընդհանուր ժողովը մէկ տարուան ժամանակով կ'ընտրէ երեք անդամէ և երկու փոխանդամէ բաղկացած Վերստուգիչ Յանձնաժողով մը, որու պարտականութիւնն է քննել և ստուգել Գլխաւոր Վարչութեան դրամական և այլ հաշիւներն ու գործառնութիւնները:

Յօդ. 15.— Հայաստանի Կարմիր-Խաչի Ընկերութիւնը իրաւական անձն է ի դէմս իր Գլխաւոր Վարչութեան, որ սոյն կանոնադրութեան և Ընդհանուր

ժողովին որոշումներուն սահմաններուն մէջ կը վարէ ընկերութեան բոլոր գործերը:

Յօդ. 16.— Գլխաւոր վարչութիւնը բաղկացած է ոչ պակաս քան 11 անդամէ և 5 փոխանդամէ, որոնք կը փոխարինեն հրաժարած անդամները: Գլխաւոր վարչութիւնը կ'ընտրուի 1 տարի ժամանակով: Հրաժարած անդամները վերընտրելի են:

Գլխաւոր վարչութեան անդամ է Առողջապահութեան կոմիտարը կամ իր ներկայացուցիչը:

Յօդ. 17.— Գլխաւոր վարչութիւնը, իր կազմը դորացնելու համար, իրաւունք ունի իրեն միացնել առաւել չորս նոր անդամ, իր ընտրութեամբ:

Յօդ. 18.— Գլխաւոր վարչութեան նիստերը կը գումարուին առնուազն երկու ամիսը անգամ մը: Աւելի յաճախ ժողովներ կը գումարուին նախագահութեան հայեցողութեամբ կամ վարչութեան հինգ անդամներու պահանջով:

Յօդ. 19.— Գլխաւոր վարչութեան որոշումները օրինական ըլլալու համար ժողովին պէտք է ներկայ ըլլան ոչ պակաս քան Գլխաւոր վարչութեան անդամներուն կէսը:

Յօդ. 20.— Գլխաւոր վարչութիւնը կ'ընտրէ իր մէջէն նախագահութիւն՝ բաղկացած մէկ նախագահէ, երկու փոխ-նախագահէ, մէկ քարտուղարէ և մէկ գանձապահէ:

Նախագահութիւնը Գլխաւոր վարչութեան գործադիր մարմինն է, որուն իրաւունք կը տրուի ստիպողական նկատուած պարագաներուն մէջ կատարել բոլոր անհրաժեշտ գործառնութիւնները, պայմանով որ առ այդ զեկուցանէ Գլխաւոր վարչութեան ընդհանուր նիստին:

Յօդ. 21.— Գլխաւոր վարչութիւնը կարող է նշա-

նակել արտասահմանի մէջ Ընկերութեան ներկայացուցիչներ եւ Լիազօրներ, որոնք կ'առաջնորդուին Գլխաւոր Վարչութեան տուած հրահանգներէն եւ պատասխանատու են Գլխաւոր Վարչութեան առաջ:

Յօդ. 22.— Օտար երկիրներու մէջ կազմուած Հայ Կարմիր-Խաչի Ընկերութիւնները կարող են համարուիլ Հայաստանի Կարմիր-Խաչի Ընկերութեան ճիւղերը, իւրաքանչիւր պարագայի համար Գլխաւոր Վարչութեան յատուկ որոշումով:

Յօդ. 23.— Ընկերութիւնը գաւառներուն մէջ ունի իր ճիւղերը, որոնք կը կազմուին միեւնոյն հիմունքներով եւ կ'առաջնորդուին միեւնոյն կանոններով որ հաստատուած են կեդրոնին համար: Ժիւղերուն վարչութիւնը կը բաղկանայ 3-5 անդամէ եւ 2 փոխանդամէ, իսկ Վերստուգիչ Յանձնաժողովը՝ 3 անդամէ եւ 2 փոխանդամէ:

Յօդ. 24.— Եթէ ո եւ է ճիւղ դադրեցնէ իր գործունէութիւնը, անոր բոլոր թղթերը եւ շարժական ու անշարժ գույքը կ'անցնին Գլխաւոր Վարչութեան:

Այս բոլորը կրկին կը տրուի նոյն ճիւղին, եթէ վերջինս իր դադարման օրէն մինչեւ մէկ տարի վերսկսի իր գործունէութիւնը:

Յօդ. 25.— Ժիւղերու վարչութիւնները, Գլխաւոր Վարչութեան կողմէ վաւերացուելէ յետոյ, իրենց գործերը կը վարեն ըստ տեղական ընդհանուր ժողովի որոշումներուն եւ համաձայն Գլխաւոր Վարչութեան հրահանգներուն:

Յօդ. 26.— Գլխաւոր եւ տեղական վարչութեանց ձեռքի տակ եղած գումարները կը բաժնուին չորս կարգի.

ա) Ընկերութեան ընթացիկ ծախքերուն յատկացուած գումարներ.

բ) Պահեստի դրամագլուխ՝ պատերազմի ժամանակուան պէտքերու համար.

գ) Հաշմանդամ զինուորականներու նպաստի դրամագլուխ, և

դ) Յատուկ նպատակներու համար հաւաքուած կամ նուիրուած գումարներ, որ կը գործածուին միմիայն յիշեալ նպատակներուն համար:

Յօդ. 27.— Տեղական վարչութիւնները իրենց ամէն տեսակ դրամական եկամուտներու 25 տոկոսը, բաց ի տեղւոյն վրայ գործադրուելիք յատուկ նպատակի համար եղած նուէրներէն, կ'ուղարկեն Գլխաւոր Վարչութեան, Ընկերութեան ընդհանուր ծախքերուն համար:

Յօդ. 28.— Գլխաւոր և տեղական վարչութեանց գումարները կը պահուին Պետական պանքային կամ անոր ճիւղերուն մէջ, ցպահանջ կամ ընթացիկ հաշուով: Պանքէն հարկ եղած քանակով դրամ վերցնելու համար չէքերը պէտք է ստորագրեն նախագահը կամ փոխ-նախագահը և գանձապահը:

Յօդ. 29.— Գլխաւոր և տեղական վարչութիւնները պարտաւոր են, իւրաքանչիւր տարուան վերջին, ընդհանուր ժողովներու գումարումէն առնուազն մէկ ամիս առաջ, իրենց գործունէութեան, ինչպէս դրամական նոյնպէս եւ մթերային, լրիւ ու կանոնաւոր գրաւոր հաշուետուութիւնը ներկայացնել համապատասխան վերստուգիչ Յանձնաժողովներուն, որոնք, իրենց կարգին, կը ներկայացնեն զայն Ընդհանուր ժողովին, անոր կցելով իրենց եզրակացութիւնը:

Յօդ. 30.— Ծիւղերու վարչութիւնները պարտաւոր են իրենց տարեկան հաշուետուութիւնը, Ընդհանուր ժողովին և վերստուգիչ Յանձնաժողովին եզրակացութեան հետ միասին, ներկայացնել յաջորդ տարուան Փետրուարի 1 էն ոչ ուշ:

Յօդ. 31.— Տեղական վարչութիւնները, ինչպէս՝ նաեւ առհասարակ Գլխաւոր վարչութեան ենթակայ հիմնարկութիւնները, որոնք սահմանուած ժամանակէն երկու ամիս յետոյ դեռ ևս ներկայացուցած չեն ըլլար իրենց հաշուետուութիւնը, լուծուած կը համարուին: Այսպիսի պարագաներու մէջ ներկայ կանոնադրութեան 24րդ. յօդուածը կը կիրարկուի:

Յօդ. 32.— Գլխաւոր վարչութիւնը թէ՛ կեդրոնի և թէ՛ ճիւղերու ընդհանուր հաշուետուութիւնը կազմելով կը հրատարակէ առանձին կամ լրագիրներու մէջ ի գիտութիւն հանրութեան:

Յօդ. 33.— Հայաստանի Հանրապետութեան Կարմիր-Խաչի խորհրդանշանն է հաւասարաթեւ ուղղանկիւնի Կարմիր Խաչ, սպիտակ տեղի վրայ: Այդ խորհրդանշանը գործածելու իրաւունքը Հայաստանի մէջ կը պատկանի բացառաբար Հ.Կ.Խ. Ընկերութեան, որուն Գլխաւոր վարչութիւնը կարող է արտօնել անոր գործածութիւնը այն հիմնարկութեանց և անձնաւորութեանց, որոնք կը ծառայեն Կարմիր-Խաչի նպատակներուն:

Յօդ. 34.— Ընկերութիւնը ունի իր կնիքը վերոյիշեալ խորհրդանշանով, «Հայաստանի Կարմիր-Խաչի Ընկերութիւն» մակագրութեամբ և Գլխաւոր կամ այս ինչ ճիւղի տեղական վարչութեան յիշատակութեամբ:

Ընդունուած է Հ. Ս. Խ. Հանրապետութեան ժողովրդական կոմիսարներու Խորհրդին 1922 Մայիս 24 ի նստին մէջ եւ հաստատուած է Ս. Խ. Հանրապետութեանց Միութեան կեդրոնական Գործադիր կոմիտէին կողմէ 1 Մարտ 1924 Թուականով:



STATUTS

Article 1.— La Société de la Croix-Rouge de la République d'Arménie est organisée selon les principes de la Société Internationale de la Croix-Rouge, adoptés par les Conventions Internationales et autres règlements internationaux établis entre 1863 et 1907.

Art. 2.— La Société se trouve sous le patronage du Gouvernement Arménien et jouit des privilèges qui lui sont accordés.

Art. 3.— La Société de la Croix-Rouge de la République d'Arménie a pour but :

a) de soigner les malades et les blessés militaires du pays, ainsi que ceux d'autres pays qui se trouveraient dans le rayon d'activité de la Société ;

b) d'assister les infirmes et les victimes des calamités générales, des épidémies et, particulièrement, de la malaria. La Société peut étendre son activité, dans ce même but, au delà des frontières du pays.

Art. 4.— Pour atteindre ces buts la Société de la Croix-Rouge de la République d'Arménie prend l'initiative auprès les autorités pour obtenir les droits nécessaires, organise des institutions auxiliaires de toutes sortes, des diverses entreprises etc.

Art. 5.— Tout citoyen majeur, sans distinction de nationalité, de religion et de sexe, ainsi que les Établissements

d'État et les Institutions publiques peuvent devenir membres de la Société.

Art. 6.— Le montant de la cotisation annuelle est de 50 copecks en or pour les membres de la Société, payable au commencement de l'année, et de 10 roubles pour les Établissements et les Institutions.

Art. 7.— Les organes de la Société sont :

- a) L'Assemblée générale.
- b) L'Administration générale.
- c) La Commission de Revision.

Art. 8.— Les Assemblées générales sont alternatives ou extraordinaires et sont convoquées dans la capitale de l'Arménie. L'Assemblée générale alternative est convoquée au moins une fois par an, au plus tard le 1^{er} avril. Les Assemblées extraordinaires sont convoquées :

- a) par décision de l'Administration générale.
- b) sur la demande de la Commission de Revision, et
- c) sur la demande, faite par écrit, de plus d'un quart des membres de la Société.

Art. 9.— L'assemblée est considérée réglementaire si au moins un tiers des membres est présent. En seconde convocation l'Assemblée est considérée réglementaire, sans prendre en considération le nombre des présents.

Art. 10.— Les attributions de l'Assemblée générale sont :

a) l'approbation des règlements de la gestion de l'Administration générale et des institutions qui lui sont subordonnées.

b) l'examen du compte-rendu de l'Administration générale, pour l'activité et les ressources de la Société.

c) la solution des questions importantes de caractère général.

d) élection de l'Administration générale et de la Commission de Revision.

e) l'approbation du projet du budget de la Société.

Art. 11.— L'ordre du jour de l'Assemblée générale est composé par l'Administration générale et rendu public un mois à l'avance. Les membres de la Société qui ont une proposition à soumettre à l'examen de l'Assemblée générale, sont tenus de la présenter à l'Administration générale au moins deux semaines avant le jour de la réunion.

Art. 12.— A l'Assemblée générale les décisions sont prises à la majorité simple des voix ; les élections se font par votation ouverte, à la majorité relative.

Art. 13.— L'Assemblée générale est dirigée par son président ; les procès-verbaux sont tenus par le secrétaire. Le président et le secrétaire approuvent les procès-verbaux et les décisions des séances, et les soumettent à l'Administration générale.

Art. 14.— L'Assemblée générale désigne pour une année la Commission de Revision, composée de trois membres et de deux candidats, pour l'inspection de la caisse et d'autres comptes et la surveillance de l'activité de l'Administration générale.

Art. 15.— La Société de la Croix-Rouge de la République d'Arménie est reconnue comme personne juridique, représentée par l'Administration générale qui gère toutes les affaires de la Société aux termes de ces statuts et des décisions de l'Assemblée générale.

Art. 16.— L'Administration générale est composée au moins de 11 membres et de 5 candidats qui remplacent les membres en démission. L'Administration générale est élue pour le délai d'un an. Les membres en démission peuvent être réélus.

Est membre de l'Administration générale le Commissaire de la Santé Publique ou son représentant.

Art. 17.— L'Administration générale a le droit de s'adjoindre, pour renforcer son personnel, pas plus de 4 nouveaux membres, par cooptation.

Art. 18.— Les réunions de l'Administration générale sont convoquées au moins une fois par deux mois. Elles peuvent avoir lieu plus souvent selon la décision de la présidence ou sur la demande de cinq membres de l'Administration.

Art. 19.— Les décisions de l'Administration générale sont considérées réglementaires si à la réunion ont participé au moins la moitié des membres de l'Administration générale.

Art. 20.— L'Administration générale désigne entre ses membres sa présidence, composée : du président, de deux remplaçants, du secrétaire et du trésorier.

La présidence constitue l'organe exécutif de l'Administration générale ; pour les affaires pressantes elle a le droit de faire tout ce qu'elle trouve nécessaire, à condition d'en faire le rapport à la réunion plénière de l'Administration générale.

Art. 21.— L'Administration générale peut désigner à l'Etranger des représentants de la Société et des délégués qui se conforment aux instructions de l'Administration générale et sont responsables devant elle.

Art. 22.— Les sociétés arméniennes de la Croix-Rouge organisées à l'Etranger peuvent être considérées comme organisations auxiliaires de la Société de la Croix-Rouge de la République d'Arménie, sur décision spéciale pour chaque cas de l'Administration générale.

Art. 23.— La Société a dans les provinces ses sections qui sont organisées sur les mêmes bases et qui se conforment aux principes du centre. L'Administration d'une section est composée de 3-5 membres, avec deux remplaçants ; la commission de revision, de 3 membres et de deux remplaçants.

Art. 24.— Dans le cas de liquidation d'une des sections, tout son dossier et tous ses biens, meubles et immeubles, sont transmis à l'Administration générale. Tout est de nouveau rendu à la même section, si dans l'espace d'un an elle recommence son activité.

Art. 25.— Les administrations des sections, après avoir été reconnues par l'Administration générale, agissent d'après les décisions de l'Assemblée locale et conformément aux instructions de l'Administration générale.

Art. 26.— Les ressources qui se trouvent à la disposition de l'Administration générale et des administrations locales sont divisées aux catégories suivantes :

a) Sommes destinées aux dépenses courantes de la Société ;

b) capital de réserve pour les besoins de temps de guerre ;

c) fonds d'assistance destinés aux invalides, et

d) sommes spéciales et offrandes destinées aux buts spéciaux, qui ne seront dépensées que pour les buts susmentionnés.

Art. 27.— Les administrations locales envoient 25 % de toutes leurs recettes, à l'exception des sommes qui ont été offertes exclusivement pour des œuvres locales, à l'Administration générale pour les besoins généraux de la Société.

Art. 28.— Les capitaux de l'Administration générale et des Administrations locales sont déposées à la Banque d'Etat ou ses succursales en dépôt ou en compte-courant. Ces sommes peuvent être retirées au moyen de chèques qui portent les signatures du président ou de son remplaçant et du trésorier.

Art. 29.— L'Administration générale et les administrations locales sont tenues à présenter à la fin de chaque année, au moins un mois avant la réunion de l'Assemblée générale, le compte-rendu détaillé, pécuniaire et matériel, aux Commissions de Revision, qui le présentent à leur tour, en y joignant leurs conclusions à l'Assemblée générale.

Art. 30.— Les administrations des sections présentent leur compte-rendu annuel, avec la conclusion de l'Assemblée générale et celle de la Commission de revision, à l'Administration générale, pas plus tard que le 1^{er} Février de l'année suivante.


Art. 31.— Les administrations locales, ainsi que toutes les institutions qui sont subordonnées à l'Administration générale, sont considérées dissoutes si dans le courant de deux mois après le délai fixé elle n'ont pas présenté leur compte-rendu; dans ce cas l'art. 24 de ces statuts est appliqué.

Art. 32.— L'Administration générale rédige le compte-rendu général de son activité et de l'activité des sections, et le rend public dans une édition spéciale ou dans la presse.

Art. 33.— Le blason de la Société de la Croix-Rouge de la République d'Arménie est représenté sur un fond blanc, par une croix rouge rectangulaire et régulière. Le droit d'usage de ce blason appartient en Arménie exclusivement à la Société de la Croix-Rouge de la République d'Arménie, dont l'Administration générale se réserve le droit d'en permettre l'usage aux institutions et aux personnes qui se mettent au service de la Société.

Art. 34.— La Société possède son sceau qui porte le blason susmentionné avec l'inscription : « Société de la Croix-Rouge de la République d'Arménie » et avec l'indication de l'Administration générale ou de l'Administration de la section.

• *Approuvé par le Conseil des Commissaires
du Peuple de la République d'Arménie le 24
Mai 1922 et ratifié par le Comité Central
Exécutif de URSS le 1er Mars 1924.*



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0033624

[11]

A ⁱ₂₅₅